



ՅՈՒՐԱՅԻՆ ԴԷՄ ՊԼՏՈՒԱՍՏԻՆ ԱՐԴԻԻՆՔՆԵՐԸ.— Ֆրանսայի մէջ Յուլիս 1924 — Յուլիս 1928, Թոքախտին դէմ բալմէթի *B. C. G.* պատուաւաստով պատուաստուած են 115000էն աւելի երախաներ, որոնց 3607ը Թոքախտաւոր մայրերէ, ծնած եւ անոնց հետ ապրած են: Հետադատութիւնները ցոյց տուած են որ Թոքախտաւոր ծնողքի հետ ապրող *չպատուաստուած* երախաներու 21,1 առ հարիւրը կը մեռնին ամէն տեսակ հիւանդութիւններու հետեւանքով. իսկ միայն Թոքախտով աւելի Ձիշտ Թիւպէրկիւլօզով՝ 15, 9 Օլօր: Նոյն ժամանակամիջոցին, միեւնոյն պայմաններու մէջ ապրող բայց *պատուաստուած* երախաներու միայն 12, 5 առ հարիւրը մեռած են զանազան հիւանդութիւններով, մէջն ըլլալով Թոքախտը, իսկ Թոքախտով՝ 3, 4 առ հարիւրը: Կը հետեւի ուրեմն Թէ Թոքախտին դէմ պատուաստը ոչ միայն կը նուազեցնէ այդ հիւանդութեամբ մեռնող երախաներուն Թիւր, այլ նաեւ ուրիշ հիւանդութիւններով մահացութիւնը, որովհետեւ կ'աւելցնէ երախաներուն դիմացկաւնութիւնը հարսանիքի, կապոյտ հագի, կոբի եւ աղիքային հիւանդութեանց դէմ:

Յիշեցնենք մեր ընթերցողներուն Թէ քալմէթի պատուաստը կը տրուի թերնէն, քիչ մը կտթի հետ խառնուած, Տնունդէն վերջ 3ըդ, 5ըդ եւ 7ըդ կամ 5ըդ, 7ըդ եւ 9ըդ օրերը (3 անգամ). երբ նորածինը 10 օրուան ըլլայ, այլեւս ուշ է, գէթ ներկայ տուեալներուն համաձայն: Կը Թելադրենք ուրեմն հայ մայրերուն, մանաւանդ Ֆրանսա գտնուողներուն, որ երբ երախայ ունենան, մանկաբարձ բժիշկէն խնդրեն, անպատճառ պատուաստել զայն: Փարիզի փասեօօրեան հաստատութիւնը (25 rue Dutot) ձրի պատուաստ կը տրամադրէ բոլոր բժիշկներուն:

ՄԵԿ ԼԻՏՐ ԿԱԹԻՆ ՍՆՆԴԱԿԱՆ ԱՐԺԻՔԸ.— ՄԵԿ լիտր կաթը, իր սննդական արժէքը, հաւասար է.— 350 կրամ եզի միսի, 300 կրամ ոչխարի միսի, 200 կրամ խոզի միսի, 400 կրամ հաւի միսի, 400 կրամ ձուկի, 8 հաւկիթի:

ՏՋՐՈՒԿՆԵՐՈՒ ՃԱՀԻՃՆԵՐԸ.— Փարիզի մէջ տարեկան 500,000 տղրուկ կը գործածուի:

Տղրուկներու բուժումը, բազմացումը, մասնաւոր արհեստ մըն է: Յատուկ Յաֆիճներու մէջ կը բազմացնեն զանոնք եւ անոնց կուտան, իբրեւ կեր՝ ողջ ձիերը կը ստիպեն մոնել Յաֆիճներուն մէջ. տղրուկները հազարներով կը փակին անոնց ու կը ծծին խեղճ կենդանիին արիւնը: Այս ահաւոր մահուան կ'ենթարկուին տարեկան 18,000 ձի...

ԲՈՒՆԻ ԱՄԼՈՒԹԻՒՆ.— Փրոֆ. Հէժէ-ժիլպէր, բռնի ամուլութեան հարցին մասին հետեւեալ տեղեկութիւնները կուտայ.

Բռնի ամուլութիւնը գործադրած են առաջին անգամ Միացեալ Նախանգները, Մասնաւոր օրէնքներով արտօնուած է կրտել կամ

հանել այբերու սերմնամբարները, կիներու ձուարանները, ֆալլոսիփոզերը, երբ ենթական, այր կամ կին, ի ծնէ ոճրագործ մըն է, խենթ, լուսնոտ, թունամոլ, տարափոխիկ եւ անբուժելի հիւանդու-
 թեամբ վարակուած, բարոյապէս ինկած մարդ մըն է, բոլոր ասոնք, եթէ չարգիլուին սերնդագործելէ, ճնունդ պիտի տան իրենց նման գաւակներու: Այնպէս որ գանոնք զրկելով սեռային գործարան-
 ներու կենդանութենէն, կարելի կ'ըլլայ մեկուսացնել դժբախտու-
 թիւնը: Այս նպատակով, կը գործածուին վիրաբուժութիւնը, որով-
 հետեւ նուազ ապահով է X ճառագայթներու ազդեցութիւնը:

Մինչեւ Յուլիս 1925, Միացեալ Նահանգներու մէջ կրտուած են 6,244 հոգի: 3,156 հոգի ենթարկուած են սերմնամբարներու հանու-
 մին, 151 հոգի՝ կրտումի, 2,778 հոգի ֆալլոսիփոզերուն բար-
 ձումի, 159 հոգի՝ ձուարաններու հատումի:

Վերջերս Ջուիցերիոյ Վ.Օ նարանգն ալ բուէարկեց բռնի ամու-
 թեան օրէնքը

ՕՁԻՆ ԹՈՅՆԸ ԿԱՏԱՂՈՒԹԵԱՆ ԴԵՂ.—Տիկ. Ֆիգալիքս Յրանսական Բժշկ-
 Կաճառին ներկայացուցած է յուշագրութիւն մը, ուր ցոյց կը տրուի
 թէ *aspic* կոչուած իժին Թոյնը, 15 աստիճան տաքցնելէ յետոյ,
 խառնելով կատաղութեան Թոյնին մէջ, կը չէզոքացնէ գայն: Նոյն
 իսկ, երբ 100 աստիճան տաքցուի, առանց կատաղութեան Թոյնին
 հետ խառնելու, թէեւ կը կորսնցնէ իր Թունաւոր յատկութիւնը,
 բայց կը պահէ կատաղութիւնը չէզոքացնելու կարողութիւնը:



ՀԻՒԱՆԴԸ (Հեռածայնով).— Դ. Բժիշկ, հարբուխ եղբ եմ, ձայնս մարեղ է. ի՞նչ
 դեպ կը յանձնարարէք:

ԲԺԻԿԿԸ.— Մի՛ հեռածայնք որպէսզի ձայնընդդ աւելի չմարի, այլ քովս եկէք: